

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՍՄԲԱՏ

ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՈՒՄ»

Տաթևիկ Աթայեան

Հեղինակային ինքնագիտակցութիւնը միջնադարեան պատմագրութեան եւ առհասարակ մատենագրութեան այն երեւոյթներից է, որի վերաբերեալ ծաւալուն ուսումնասիրութիւններ են կատարում անտիկ աշխարհի, Բիւզանդիայի եւ Ռուսաստանի մշակոյթի հետազոտողները¹: Հեղինակային ինքնագիտակցութեան բնութագրական գծերի պարզաբանումն ու համակողմանի քննութիւնն անհրաժեշտ է ինչպէս կոնկրետ պատմական երկի լիարժէք հետազոտութեան, այնպէս էլ՝ միջնադարեան հայ պատմագրութեան մէջ ստեղծագործական մտածողութեան զարգացման ներքին միտումները ճիշտ հասկանալու տեսանկիւնից: Հեղինակային ինքնագիտակցութեան խնդրի ուսումնասիրումը կարեւոր է յատկապէս ժամանակագրութիւնների պարագայում, քանի որ այդ

ժանրի ստեղծագործութիւններում հեղինակի անձը մշտապէս ստուերում է: Ժամանակագիրները, որպէս նախատիպ վերցնելով իրենց նախորդների աշխատութիւնները, պարզապէս շարունակում էին իրադարձութիւնների յետագայ շարադրանքը: Հետեւաբար՝ շարադրման այս եղանակի կիրառմամբ հեղինակի անձի շեշտադրումը անիմաստ էր դառնում: Օրինակ՝ Սամուէլ Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» աշխատութիւնը, որը հասցուել է ընդհուպ մինչեւ ԺԸ դար, շարունակուել է տասնեակ հեղինակների կողմից²: Այս հանգամանքը, սակայն, տեքստում գրեթէ աննկատ է մնում: Ուստի պատահական է, որ նրանց մեծ մասի անունները անյայտ են կամ վիճաբարոյց: Այս նոյն պատճառով է, որ կասկածի տակ է դրուել նաեւ Ստեփանոս Օրբէլեանի՝ ժամանակագրութեան հեղինակային պատկանելութիւնը³: Ստեփանոս Օրբէլեան Սիւնեցի պատմիչը, որը սերունդներին է թողել ինքնատիպութեան եւ վառ անհատականութեան կնիքը կրող «Պատմութիւն նահանգին Սիսական» եր-

1 Е. А. Конявская, Авторское самосознание древнерусского книжника (XI – середина XV в.), Москва, 2000. Գլխի, Авторское самосознание создателей Киево-Печерского патерика, «Филологические науки», 2000, N4, с. 87-94. Գլխի, К вопросу об авторском самосознании древнерусского агиографа, «Вестник Литературного института им А. М. Горького», Москва, 1998, с. 23-24. И. С. Чичуров, К проблеме авторского самосознания византийских историков IV - IX вв., «Античность и Византия», Москва, 1975, с. 203-217. Գլխի, Место «Хронографии» Феофана в ранневизантийской историографической традиции (IV -нач. IX в.), «Древнейшие государства на территории СССР», Москва, 1983, с. 20-41. Н. В. Синицына, Авторское самосознание в русской литературе и общественной мысли, Россия на путях централизации, Сборник статей, Москва, 1982, с. 213-220. С. С. Аверинцев, Греческая «литература» и ближневосточная «словесность», Типология и взаимосвязь литератур древнего мира, Москва, 1971, с. 220-224.

2 Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, Աղամից միջնադար, աշխատասիրութեամբ Կ. Մաթեոսեանի, Երևան, 2014, էջ 36:
3 Լ. Խաչիկեան, Վ. Յակոբեան, Ինչպէս չպէտք է հրատարակուեն պատմական սկզբնաղբիւրները (պրոֆ. Աշ. Արրահամեանի կողմից Ստեփանոս Օրբէլեանի անուամբ հրատարակուած «Ժամանակագրութեան» անգլոյթեամբ), ՀՀ ԳԱ «Տեղեկագիր» (Ռուս. գիտ.), 1949, թիւ 2, էջ 77-78. Է. Մ. Բաղդասարեան, XIII դարի ժամանակագրութեան հեղինակի մասին, ՊԲՀ, 1971, թիւ 2, էջ 210-216:

կը, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան հիման վրայ շարադրել է նոյնատիպ մի աշխատութիւն, որը, ընդհակառակը, ամենեւին աչքի չի ընկնում իւրօրինակ մտեցումներով ու ինքնուրոյն ընկալումներով: Խնդիրն այն է, որ ժամանակագրութիւնները, սկզբունքորէն աւարտ ունենալ չէին կարող. դրանք սկզբից եւեթ նախատեսուած էին շարունակուելու համար, բաց էին յետագայ լրացումների ու շարադրութիւնների համար: Արդիւնքում՝ այդօրինակ աշխատութիւններում հեղինակային ակտիւութիւնն աննշան էր դառնում, ուստի ժամանակագրի ստեղծագործական ու գաղափարական մտածողութեան ուղղուածութիւնը հնարաւոր է պարզաբանել միայն յատուկ ուսումնասիրութեան շնորհիւ: Օրինաչափ է աւանդոյթի եւ ժանրի օրէնքների ներքոյ միտումնաւոր թաքնուած հեղինակի «ես»-ի քննութիւնը՝ հասկանալու համար, թէ ինչպէս է դրսեւորուում եւ ինչ փոփոխութիւններ է կրում հեղինակային մտածողութիւնը ժամանակագրութիւններում:

Այս առումով բացառութիւն է Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը»: Համապարփակ ուսումնասիրման եւ երկի հեղինակային պատկանելութեան յատկեցման նպատակադրումից ելնելով՝ յատուկ ուշադրութեան է արժանի յատկապէս պատմիչի հեղինակային ինքնագիտակցութեան լուսաբանման խնդիրը: Այդ հարցի քննութիւնը բաւականին բարդ է, քանի որ հեղինակը, ելնելով սեփական հայեացքներից, գրեթէ ոչինչ չի հաղորդում իր մասին: Հեղինակի ուղղակի տեղեկութիւնների բացակայութեան պայմաններում, թերեւս, միայն նրա ստեղծագործական եղանակի ինքնատիպութիւնն ու փոքրաթիւ նշումներն են, որ թոյլ են տալիս որոշ եզրայանգումներ անել այն մասին, թէ ինչ նպատակ է հետապնդել հեղինակը, ինչպէս է վերաբերուել իր աշխատութեանը, գիտակցել է, արդեօք, իր տեղն ու դերը նա-

խորդ պատմիչների եւ անցեալի նշանաւոր դէմքերի շարքում, թէ՛ ոչ:

«Տարեգրքում» առաջին դէմքով եզակի կամ յոգնակի թուով արտայայտուած հեղինակային նշումների սակաւաթիւ լինելն առաջին հայեացքից այն տպաւորութիւնն է ստեղծում, որ Սմբատ Սպարապետը հեղինակային իրաւունքների չի յաւակնել: Սակայն երկի մանրագնին ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ, ողջ թուացեալ «անդեմութեամբ» հանդերձ, բնագրում առկայ են հեղինակային ինքնատիպութիւններ, որոնք ապացուցում են ճիշտ հակառակը՝ մատենագրի ակտիւ ու շահագրգիռ վերաբերմունքը սեփական երկասիրութեան նկատմամբ:

Այսպէս, հեղինակային ինքնագիտակցութեան տարրերը նախ երեւում են Սմբատ Սպարապետի երկի կառուցուածքային իւրօրինակութեան դրսեւորման մէջ: «Տարեգրքի» համադրումը սկզբնաղբիւրների հետ ցոյց է տալիս, որ դրանում առկայ են համակարգային այնպիսի առանձնայատկութիւններ, որոնց շնորհիւ այն տարբերում է իր նախատիպերից: Եթէ Մատթէոս Ուռհայեցին եւ Գրիգոր Երէցը, առաջնորդուելով իրադարձութիւնները ժամանակագրական յաջորդականութեամբ ներկայացնելու սկզբունքով, մեծ ուշադրութիւն չեն դարձնում աշխատութեան ներքին կառուցուածքային բաժանմանը, ապա Սմբատ Սպարապետը, ով ամենայն հաւանականութեամբ կարեւորում է այս հարցը, նախընտրում է պատմութիւնը հարկւրամեայ փուլերով ներկայացնելու եղանակը: Նկատենք, որ թէեւ Մատթէոս Ուռհայեցին իր աշխատութեան առաջին մասում ներկայացնում է շուրջ հարիւր տարուայ պատմութիւն եւ երկրորդ հատուածը բացում՝ յաջորդ՝ Ծ (1051-1052 տարով սկսուող) դարի անցուդարձերով, այնուամենայնիւ, հետեւողականութիւն չի դրսեւորում: Ժամանակագիրն ընդհատում

է իրադարձութիւնների շարադրումը նշուած դարի 50-ական թուականներով, ապա վերսկսելով՝ շարունակում է դէպքերի նկարագրութիւնը, բայց արդէն՝ առանց նախկին միտման: Ինչ վերաբերում է Գրիգոր Երէցին, ապա նա առհասարակ իր առջեւ աշխատութեան կառուցուածքային կարգաւորման խնդիր չի դրել: Ժանրի օրէնքներից ելնելով՝ Գրիգոր Երէցը իր շարայարած հատուածը չի ընկալել որպէս մէկ ամբողջութիւն, ինչն էլ յանգեցրել է չգիտակցուած կրկնութիւնների, իսկ իրադարձութիւնները ներկայացնելիս՝ ժամանակագրական յաջորդականութեան որոշակի խախտումների: Մինչդեռ Սմբատ Սպարապետը, նպատակադրուելով շարադրանքը ներկայացնել հարիւրամեակներով, «Տարեգրքը» բաժանել է չորս մասի՝ իւրաքանչիւրին տալով ժամանակագրական բնոյթի վերնագիր⁴: Երկի ներքին բաժանումով, որն, ըստ էութեան, հեղինակային մտայղացման արդիւնք է, Սմբատ Սպարապետը «Տարեգրքին» տալիս է կառուցուածքային ինքնատիպութիւն, որով էլ այն առանձնացնում է նախորդ երկերից, իսկ այս բնութագրական գիծն արդէն հեղինակային ինքնագիտակցութեան դրսեւորում է:

Այն, որ Սմբատ Սպարապետը հեղինակային ինքնագիտակցութեամբ օժտուած պատմիչ է, ակնյայտ է նաեւ աշխատութեան կուռ կառուցուածքը պահպանելու յստակ գիտակցումից: Հեղինակը մտովի առանձնացնում է արդէն ասուածը եւ անվրէպ յիշում է, թէ յետագայում ինչ պէտք է շարադրուի եւ ինչ ծաւալով: Օրինակ, պատմելով 1049 թ. սելջուկների կողմից Արծն քաղաքի գրաւման եւ աւերման առիթով Կոստանդին Մոնոմախ կայսեր (1042-1055)՝ Արեւելք գործ ուղարկելու մասին, հեղինակը նախընտրում է կրկին չյիշատա-

կել զօրավարների անունները: Նա նշում է, որ այդ մասին արդէն գրուել է⁵: Կամ, անդրադառնալով Պապեռոնի տէր Բակուրան Հեթումեանին, հեղինակը գրում է, որ նա տիրեց նշեալ բերդին հօր՝ Սմբատի մահից յետոյ: Պատմիչը յիշեցնում է ընթերցողին, որ Սմբատ Հեթումեանը սպանուել է Թորոս Բ իշխանի զօրքերի կողմից՝ «զոր յառաջն ասացաք, ի դուռ Մսսայ»⁶: Մէկ այլ դէպք խօսելով Լեւոն Մեծագործի՝ թագաւոր հռչակուելու մասին՝ հեղինակը գրում է. «...արդ պարտ է մեզ պատմել փոքր ի շատէ զոր ըստ նորայն ժամանակի վայելչացեալ էր տունս Հայոց»⁷ այսպիսով բացորոշելով իր անելիքը:

Հեղինակային ինքնագիտակցութեան դրսեւորումը չի սահմանափակուում «Տարեգրքի» կառուցուածքով. այն յստակօրէն նկատելի է նաեւ ստեղծագործութեան ոճաբանական ինքնատիպութիւններում: «Տարեգրքի» սկզբնաղբերների հետ զուգադրումը ցոյց է տալիս, որ հեղինակը հէնց սկզբից հոգ է տարել նաեւ իր աշխատութեան ոճի մասին: Այսպէս, քաղաքներով Մատթէոս Ուռհայեցու ժամանակագրութիւնն ու Գրիգոր Երէցի աւելացրած հատուածը՝ նա փոխանցում է դրանց բովանդակութիւնը, սակայն ինքնուրոյնութիւն է դրսեւորում երեւոյթները, դէպքերն ու դէմքերը ներկայացնելիս ու գնահատելիս: Մասնաւորապէս, եթէ Մատթէոս Ուռհայեցու եւ Գրիգոր Երէցի երկերի համար բնութագրական է որպէս իւրօրինակ նախանշան դիտուող բնական երեւոյթների, գանազան արտառոց դէպքերի մանրամասնութիւնների առատութիւնը, աստուածաշնչեան մէջբերումների, կրօնաբարոյական բնոյթի հաղորդումների ծաւալուն լինելը, ապա «Տարեգրքի» ոճաբանական ինքնատիպութիւններից են

5 Նոյն տեղում, էջ 46:
6 Նոյն տեղում, էջ 187:
7 Նոյն տեղում, էջ 208:

4 Սմբատայ Սպարապետի Տարեգրքը, Վեներտիկ, 1956, էջ 48, 170, 229:

հրաշքների եւ նշանների մասին պատմող դրուագների համառօտութիւնը, սուրբգրային վկայութիւնների, ճառերի հակիրճութիւնը եւ այլն: Բերենք մի քանի օրինակ: ՆՂԴ թուականի ներքոյ Մատթէոս Ուռհայեցին գրում է. «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆՂԴ եղեւ մեծասաստ բարկութիւն Աստուծոյ ի վերայ արարածոցս. քանզի հայեցաւ տէր Աստուած բարկութեամբ յարարածս իւր, եւ եղեւ շարժ ահաւոր եւ սոսկալի, եւ դողաց ամենայն տիեզերք առ հասարակ ըստ բանի մարգարէի՜ն՝ որ ասէ. «Ո՞ հայի յերկիր եւ տայ դողալ սմա»: Արդ այսպիսի անանութեամբ շարժեցաւ ամենայն արարածքն, եւ բազում եկեղեցիք խախտեալ փլաւ ի հիմանց...»⁸: Մեր ընդգծած արտայայտութիւններն աւելի շուտ արտացոլում են հեղինակի մտայնութիւնը եւ բնական շարքային աղէտին հաղորդում են տիեզերական ընդգրկման կողպասի երանգ: Դէպքի արձանագրման իւրօրինակ նախաբանը՝ «եղեւ մեծասաստ բարկութիւն Աստուծոյ ի վերայ արարածոցս. քանզի հայեցաւ տէր Աստուած բարկութեամբ յարարածս իւր», ինչպէս տեսնում ենք, կրկնութեան միջոցով է ստեղծուել եւ տպաւորութիւնն ու ժգնացնելու նպատակ է հետապնդել:

Սմբատ Սպարապետի հաղորդումը, հակիրճ լինելով հանդերձ՝ զարմանալիօրէն նաեւ կոնկրետ է. «Ի թուին ՆՂԴ եղեւ սաստիկ եւ ահաւոր շարժ, եւ փոխեցաւ գոյն լուսատրացն ի կարմրութիւն, եւ մատախոյ ունէր գերեսս երկրի, եւ մեծամեծ եկեղեցիք եւ շինուածք փլան ի շարժէն...»⁹:

Մէկ այլ հատուածում, խօսելով Անտիոք քաղաքի մասին, Մատթէոս Ուռհայեցին գրում է. «Իսկ ի լինել թուականութեանս Հայոց ՇԲ՝ եղեւ ահաւոր նշան եւ սոսկալի, եւ կատարած մեծի բարկութեան

երեւեալ ի մեծ քաղաքն Անտիոք, զոր ի ներքոյ արեգականն գործեցաւ այս սքանչելիս, որ է տեսողացն ահաւոր եւ հրաշալի: Եւ եղեւ այս նշանս եւ դղրդումն ամենայն հաւատացելոց Քրիստոսի, զոր այժմ մեծասաստ սպառնալեօք յայտնեաց Աստուած զգատաստան իւր զահաւոր: Եւ եղեւ պատճառ բարկութեանն այսպէս. եւ արդ վասն զի ազգն Ասորոց բազում էին ի քաղաքն Անտիոք ոսկով եւ արծաթով, լցեալ հարստութեամբ եւ ամենայն փառաւորութեամբ...»¹⁰:

Սմբատ Սպարապետը քաղաքում է. «Ի թուին Հայոց ՇԲ եղեւ մեծ սքանչելիք ի մեծն Անտիոք, քանզի յԱսորոց ազգէն բազումք էին ի քաղաքին, եւ էին յղփացեալք փարթամութեամբ...»¹¹:

Քաղաքներով սկզբնաղբերի հաղորդումները՝ Սմբատ Սպարապետը յապաւում է սուրբգրային մէջբերումները, աստուածային նախախնամութեան մասին պատմող հատուածները՝ փոխանցելով միայն դրուագի սեղմ բովանդակութիւնը: Հեղինակը նոյն մօտեցումն է ցուցաբերում նաեւ Գրիգոր Երէցի աշխատութիւնը քաղաքներու: Համադրենք մէկ հատուած:

ՇՂԸ թուականի ներքոյ Գրիգոր Երէցը գրում է. «Յետ այսորիկ եկին ցրուեալ եւ վատնեալ զօրք ի Սամուսատացւոց քաղաքէն ի քաղաքն Քեսուն, եւ ահա եհաս ի լսելիս ամենեցուն: Քանզի ձօսլինն, որ էր յաւուրսն յայնոսիկ գլուխ քրիստոնէից, գնալով յԱնտիոք յաղագս խորհելոյ ինչ, թերեւս կարասցէ ուստեք օգնականութիւն գտանել, մատնեցաւ յաստուածասաստ բարկութեանն ինքն միայն ի զօրաց իւրոց՝ ի գերութիւն. որպէս ի հնումն որդին Դաւթի փախուցեալ ի հօրէն յաղագս չար կամաց իւրոց զոր առեալ սաստ հրամանին Աստուծոյ զհերաց գլխոյ նորա վրէժնդիր

8 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 97:
9 Սմբատայ Սպարապետի Տարեգրքը, էջ 42 (ընդգծումն մերն է - Տ. Ա.):

10 Մատթէոս Ուռհայեցի, էջ 114:
11 Սմբատայ Սպարապետի Տարեգրքը, էջ 49:

լինելով աստուածաճանոց առնն Դաւթի. ճեղք ծառոյն կախեալ պահէր զիւրեալ, մինչեւ զհետ մտեալ թշնամեացն հասեալ եւ սուսերաւ կտրեալ զգլուխն անհնազանդ որդւոյն: Այսպէս դիպեցաւ առնս այսմիկ կոմսի՝ արտաքոյ գտեալ կամացն Աստուծոյ. գերէեալ եղեւ յայլադէմ եւ ի գազանաբարու ատելեացն Քրիստոսի. եւ տարեալ ի քաղաքն Հալպ...»¹²:

Սմբատ Սպարապետը հետեւեալ կերպ է վերաշարադրում այդ հատուածը. «Եւ յետ այսորիկ մնացին զօրք ձօսլինին ցրուեալք իբրեւ զոչխարս անհովիւ, զի յամենայն կողմանց պատահէին պատուհասք մեղաց ի Տեառնէ. վասնզի գնայր կոմսն ձօսլինն յԱնտիոք, եւ ի գիշերի մի ելեալ սակաւիկ մի ի ճանապարհէն, պետս արտաքին կարեաց, եւ ընկերք նորա անցեալ գնացին, եւ նա վարեաց երիվարաւ զկնի զի հասցէ նոցա եւ դիպեալ ի ծառ մի՝ անկաւ յերիվարէն ցաւալից, եւ երիվարն ոստեալ ի նմանէ փախեալ, եւ նա մնաց անկեալ մինչեւ յառաւօտն. եւ ընկերքն ի գիշերին ոչ իմացան զայս: Իսկ առաւօտուն եկեալ հովուականք, եւ առեալ տարան զնա ի Հալպ, եւ անդ եղաւ ի բանտի»¹³:

Ակնյայտ է, որ հեղինակին քիչ են հետաքրքրում սկզբնաղբիւրի սուրբգրային եւ աստուածային նախախնամութեան մասին պատմող հատուածները: Նա, փոխանցելով դրուագի հակիրճ բովանդակութիւնը, յապաւում է վերջինիս կրօնական բնոյթի դատողութիւններն ու երկարաշունչ հաղորդումները, որով, ըստ էութեան, նաեւ յստակութիւն եւ պարզութիւն է հաղորդում իր երկին: Միաժամանակ նաեւ նկատելի է, որ հակիրճութեան ձգտումը Սմբատ Սպարապետի համար ինքնանպատակ չի եղել: Այսպէս, համառօտելով հանդերձ Գրիգոր Երէցի հաղոր-

դումը, նա լրացուցիչ եւ միանգամայն իրատեսական մանրամասնութիւններ է աւանդում խաչակիր տիրակալի կալանաւորման մասին: Այսպիսով՝ ակններեւ է նոր ու ինքնուրոյն տեղեկութիւններով պատումը հարստացնելու հեղինակային ձգտումը:

Որ սկզբնաղբիւրի հաղորդած տեղեկութիւնների ոճական բնոյթի վերամշակումները զուտ բնագրի կրճատման ցանկութեան հետեւանք չեն, այլ՝ հեղինակի նպատակային աշխատանքի արդիւնք, յստակօրէն երեւում է «Տարեգրքի» բազմաթիւ հատուածներէ: Նշենք, որ «Տարեգրքում» փոխւում են ոչ միայն աստուածային նախախնամութեան մասին պատմող երկարաշունչ հատուածները, այլ նաեւ կրօնախրատական բնոյթի հաղորդումներն ու հերոսների ծաւալուն ճառերը: Օրինակ՝ Մատթէոս Ուռհայեցու ժամանակագրութիւնում Գագիկ Բ. Բագրատունու՝ մի քանի էջ զբաղեցնող գրութիւնը (ի պատասխան Կոստանդին ԺԱ. Դուկաս կայսեր (1059-1067)՝ հայոց եկեղեցունկատմամբ կիրառած Հայածանքների)¹⁴, Սմբատ Սպարապետը փոխանցում է ընդամէնը երկու նախադասութեամբ. «Նգովեաց եւ զամենայն չար դասսն հերետիկոսացն, որք յանդգնեցան խօսել զչար բանս ի սուրբ Երրորդութիւնն եւ ի փրկագործ տնօրէնութիւնն Քրիստոսի: Եւ զայս այսպէս գրեաց ընդարձակագոյն բանիւ, եւ խօսեցաւ առաջի թագաւորին եւ ամենայն հոռետորացն Յունաց, եւ հաճեալ հաւանեցոյց զամենեսան»¹⁵:

Գրիգոր Երէցի երկում երկու տասնեակ էջեր զբաղեցնող Բարսեղ վարդապետ Մարաշեցու՝ խաչակիր իշխան Պաղտինի (Բաղդուխի) մահուան առիթով գրած ողբ-գամբանականը¹⁶ Սմբատ Սպարապետը փոխան-

ցում է միայն հետեւեալ նախադասութեամբ. «...տէր Բարսեղ գրեաց նամակ ողբերգական ի դիմաց Պաղտինն եւ առաքեաց յիւր գաւառսն՝ զի ընթերցեալ լացին. նա եւ դիմաց Պաղտինն խոստովանեցաւ Աստուծոյ եւ ամենեցուն զմեզս իւր՝ խնդրելով ի Տեառնէ ողորմութիւն»¹⁷:

Սկզբնաղբիւրների կրօնախրատական բնոյթի հաղորդումները վերաշարադրելիս՝ հեղինակը պահպանում է միայն «կարեւորը»՝ բաց թողնելով «երկրորդականը»: Այստեղ իհարկէ մեծ դեր ունի հեղինակների սոցիալական պատկանելութիւնը, ինչպէս նաեւ՝ նրանց աշխարհահայեացքների տարբերութիւնները: Հարցն այն է, որ աշխարհահայեացքը, որպէս ընկալման եւ ճանաչողութեան հիմք, ձեւաւորում եւ մեծապէս պայմանաւորում է հեղինակներից իւրաքանչիւրի ոճական ինքնատիպութիւնը ստեղծագործութիւնում: Այսպէս, եթէ Մատթէոս Ուռհայեցին եւ Գրիգոր Երէցը հակուած են տեսնելու աստուածային նախախնամութեան դերը բնութեան աղէտալի երեւոյթների, թշնամու յարձակումների եւ առհասարակ ամէն տեսակ յաջողութիւնների եւ ձախողումների մէջ, ապա Սմբատ Սպարապետը կանխորոշմանն առանձնապէս կարեւորութիւն եւ նշանակութիւն չի տալիս: Արդիւնքում ժամանակագրութիւնում եւ նրա շարունակութիւնում առկայ՝ երկրային գործերին գերբնական ուժերի նկատելի միջամտութիւնը «Տարեգրքում» յաճախ քօղարկւում է, եւ աստուածային նախախնամութեան՝ պրովիդենցիալիզմի հայեցակարգը կորցնում է իր առաջնայնութիւնը: Իհարկէ, ճիշտ է՛ր լինի պնդել, որ «Տարեգրքում» երկնային ուժերն ընդհանրապէս որեւէ դեր չեն խաղում: Սմբատ Սպարապետը, ելնելով իր առջեւ դրուած... որոշակի խնդիրներից, երբ հարկ է լինում ընդգծել կամ տպաւորիչ դարձնել որեւէ իրադար-

ձուցութիւն, անշուշտ, առաջնորդւում է միջնադարեան մտայնութեամբ: Սակայն, լինելով աշխարհիկ հեղինակ, նա նախախնամութեամբ պայմանաւորուած իրադարձութիւնների եւ երեւոյթների մասին խօսում է անհամեմատ աւելի քիչ եւ զուսպ կերպով: Ուստի այս տեսանկիւնից Սմբատ Սպարապետի հեղինակային ոճը նոյնպէս տարբերում է Մատթէոս Ուռհայեցու, Գրիգոր Երէցի եւ, առհասարակ, հոգեւորականութեան ներկայացուցիչ այլ հեղինակների երկերի ոճից:

Կարելի է նշել բազմաթիւ օրինակներ, երբ հեղինակը քաղազրելով իր սկզբնաղբիւրները, վերափոխում է դրանց ոճը: Սակայն այստեղ, թերեւս, կարեւոր է ոչ այնքան վերամշակումների քանակը, որքան այն իրողութիւնը, որ նմանատիպ օրինակները հեղինակային ինքնուրոյնութեան եւ ակտիւութեան դրսեւորումներ են: Նկատենք նաեւ, որ վերը նշուած բնոյթի ընդարձակ հատուածների յապաւումները եւ համառօտումների ընդհանուր ծաւալը ցոյց են տալիս, որ հեղինակի ինքնուրոյնութիւնն արտայայտւում է ինչպէս երկի ոճի ընտրութեան հարցում, այնպէս էլ նիւթի կառուցուածքային բաշխման մէջ: Իսկ սա արդէն վկայում է հեղինակի կողմից երկի բովանդակութեան հարցում ունեցած որոշակի պատկերացումների եւ հայեացքների մասին, որն էլ, իր հերթին, «Տարեգրքում» հեղինակային ինքնագիտակցութեան առկայութիւնը փաստող իրողութիւն է:

Նշուածը բաւական է՝ ցոյց տալու համար, որ ոճի առումով հեղինակի կախուածութիւնն իր նախորդներից նուազագոյն աստիճանի է: Սմբատ Սպարապետը, քաղազրելով իր սկզբնաղբիւրների հաղորդումները, «Տարեգրքը» հեղինակում է ոճական միանգամայն այլ ձեւակերպումներով, որոնք, լինելով նպատակային աշխատանքի դրսեւորում, վկայում են նրա՝

12 Մատթէոս Ուռհայեցի, էջ 395:
13 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 167:

14 Մատթէոս Ուռհայեցի, էջ 163-178:
15 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 65:
16 Մատթէոս Ուռհայեցի, էջ 375-395:

17 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 165:

ինքնուրոյն, հեղինային ինքնագիտակցութեամբ օժտուած պատմիչ լինելու մասին:

Նշենք, որ «Տարեգրքում» հեղինակային ինքնագիտակցութեան արտայայտման եղանակներից է նաեւ սկզբնաղբիւրների յիշատակումը: Սմբատ Սպարապետը, բացառութեամբ մէկ-երկու անուղղակի նշումների, գրեթէ ոչինչ չի յայտնում իր սկզբնաղբիւրների մասին: Այս փաստերը օրինաչափ են դարձնում հետեւեալ հարցադրումը. Սմբատ Սպարապետը պատկերացնում է իրեն որպէս նախորդ հեղինակների երկերը պարզ շարունակող, թէ՞ գիտակցում է սեփական ասելիքի ու շարադրանքի կարեւորութիւնն ու նշանակութիւնը, այսինքն՝ ունի հեղինակային յաւակնութիւններ:

Այսպէս, Մատթէոս Ուռհայեցին ժամանակագրութիւնում նշում է, որ նախորդ տարիների մասին պատմող նիւթերը նա ի մի է բերել՝ վերցնելով «յառաջին պատմագրացս» ու «տեսողացն եւ լսողացն»¹⁸ եւ այն ինչ նա է արել (քննութեան ենթարկել ու շարադրել բոլոր ժողովուրդներին, թագաւորներին, հայրապետների եւ իշխանների մասին բովանդակ տուեալները), ուրիշը չէր կարող անել¹⁹: Այս նշումով Մատթէոս Ուռհայեցին, ըստ էութեան, առանձնացնում է ե՛ւ իրեն, ե՛ւ սեփական աշխատութիւնը միւսներից: Հեղինակային ինքնարտայայտման այս դրսեւորումները օտար են «Տարեգրքի» համար: Սակայն, չնայած նրան, որ Սմբատ Սպարապետը յատուկ նշումով չի առանձնացնում իրեն այլ հեղինակների շարքում, երկի վերլուծութիւնը վեր է հանում նրա՝ իր աշխատութիւնը միւսներից գատելու միտումը: Մասնաւորապէս, անդրադառնալով խաչակրաց առաջին արշաւանքին եւ այն գլխաւորողներին, հեղինակը, աւելորդ հա-

մարելով մանրամասնութիւնների գրի առնելը, նշում է. «Պատմութիւնն լիակատար, եւ անուանք իշխանացն գրեալ կայ ի ֆրանգ պատմագիրքն»²⁰: Հրաժարուելով կրկնողութիւնից՝ Սմբատ Սպարապետը դրսեւորում է իր աշխատութիւնը նախորդներից տարբերակելու տրամադրուածութիւն: Այն, որ հեղինակն իր աշխատութիւնը գատորոշում է միւսներից, փաստում է նաեւ մէկ այլ օրինակով: Պատմելով Ալեքսիոս Ա կայսեր (1081-1118) եւ առաջին խաչակիրների միջեւ կայացած համաձայնութեան մասին՝ հեղինակը գրում է. «Եւ ապա թագաւորն Ալեքս առաքէր զօրս ընդդէմ նոցա ի պատերազմ, եւ նոքա արարին զնոսա փախստական եւ զբազումս ի նոցանէ կոտորեցին: Եւ ապա թագաւորն Ալեքս արար ընդ նոսա սէր, բայց ոչ բոլորով սրտիւ, որպէս պատմի յիրեանց գիրսն...»²¹: Այս ձեւակերպման մէջ, ըստ էութեան, արդէն իսկ դրսեւորւում է հեղինակի՝ սեփական ասելիքը սկզբնաղբիւրների հաղորդումներից առանձնացնելու միտումը, որը բնորոշ է հեղինակային ինքնագիտակցութեամբ օժտուած պատմիչներին: Նկատենք նաեւ, որ հեղինակը, քննական վերաբերմունք հանդէս բերելով, անուղղակի կերպով վկայում է նաեւ իր՝ իրադարձութիւններն անկողմնակալ ներկայացնելու հակուածութեան մասին:

Չնայած «Տարեգրքում» յստակ դրսեւորուող հեղինակային ինքնագիտակցութեանը, դրանում անմիջականօրէն չի նշուում հեղինակի մասին: Երկի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ նրա անձը ստուեւորուած է («Տարեգրքում» չենք գտնում անմիջական վկայութիւններ հեղինակի, նրա մտայնացումների, երկի ստեղծման նպատակի, դրդապատճառների եւ մի շարք այլ հարցերի մասին): Բայց նկատենք, որ

20 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 100 (ընդգծումը մերն է - Տ. Ա.):
21 Նոյն տեղում (ընդգծումը մերն է - Տ. Ա.):

18 Մատթէոս Ուռհայեցի, էջ 112:
19 Նոյն տեղում, էջ 279-280:

հեղինակի անհատական ընկալման եւ մօտեցման առանձնայատկութիւնները, պայմանաւորուած նրա աշխարհահայեացքով եւ գաղափարական պատկերացումներով, անխուսափելիօրէն արտայայտուում են այն ամէնի փոխանցմամբ եւ ներկայացմամբ, ինչը հեղինակի տեսանկիւնից տեղի է ունեցել «իրականում»: Դա էլ հէնց նկատելի է դարձնում հեղինակի անձը: Այսպէս, հեղինակը, հրաժարուելով կրօնական բնոյթի հաղորդումների բառացի ու ամբողջական փոխանցումներից եւ լուսանցքային դեր յատկացնելով դրանց, իր ստեղծագործութիւնում կարեւորում է ռազմաքաղաքական իրադարձութիւնների արձանագրումը եւ առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում պատմական նշանաւոր դէմքերի բնութագրմանը՝ որպէս կանոն դրսեւորելով ակտիւ դիրքորոշում:

Սկսենք «Տարեգրքի» հեղինակի աւագ ժամանակակիցի՝ Կիլիկիայի հայկական իշխանութիւնը թագաւորութեան վերածած Լեւոն Մեծագործի կերպարից: Սմբատ Սպարապետի վերաբերմունքը Լեւոն Մեծագործի նկատմամբ նկատելի է «Տարեգրքում» նրա առաջին իսկ յիշատակման մէջ: Հեղինակը յայտնում է, որ Լեւոնը «յաղագս ոմանց չարախօսաց», որոնք Ռուբէն Գ (1175-1187) իշխանին յայտնել էին նրա ըմբոստանալու մտադրութեան մասին, ստիպուած է լինում փախչել նախ Տարսոն, յետոյ՝ Կոստանդնուպոլիս: Ապա հեղինակը յաւելում է, որ «զօրութիւն աստուածային պահեաց զնա անդ եւ ընկալաւ բազում մեծարանս եւ սէր ի թագաւորէն»²²: Բացի այդ, Լեւոնը երկար չի մնում Կոստանդնուպոլսում: Վերադառնալով հայրենիք՝ նա սիրով ընդունւում է Ռուբէն Գ իշխանի կողմից եւ ստանում Կապան բերդը: Հեղինակի ընդգծուած դրական վերաբերմունքը Լեւոն Մեծագործի հանդէպ նկատելի է նաեւ երկու եղբայրների կերպար-

ների համադրումից: Գալով իշխանութեան՝ Ռուբէն Գ-ն սկսում է վատնել Մլեհ իշխանի կուտակած հարստութիւնը՝ «ի պէտս եւ յանպետս» ապա վրէժխնդիր է լինում Մլեհի սպանութեան համար՝ դաւադիրներին գետում խեղդելով²³: Մէկ այլ դրուագում, պատմելով Ռուբէն իշխանի Անտիոք գնալու մասին, հեղինակը հարկ է համարում յայտնել այդ ուղեւորութեան «իրական» պատճառների մասին: Ըստ նրա՝ «Ռուբէն պարապեալ վաւաշոտ ցանկութեանց եւ պոռնկական խորհրդոց, եւ այնր աղագաւ գնաց Անտիոք»²⁴: Այլ է Լեւոն Ա արքայի բնութագիրը: Նա, անցնելով իշխանութեան գլուխ, «ոչինչ պատճառի եղեւ վրէժխնդիր ումէք», այլ ապաւինեց Աստուծոյ, որից յաջողութիւն ստացաւ, ու նրա իշխանութիւնը կարգաւորուեց²⁵: Լեւոն Մեծագործը հեղինակի համար անկասկած «բարեբարու եւ աննենգ» արքայ է: Նա ընդգծում է վերջինիս իմաստուն եւ հանճարեղ լինելը, հմտութիւնը ձիավարութեան մէջ, քաջասրտութիւնը զինուորական գործում, բարութիւնը մարդկանց հանդէպ եւ բարեմասնութիւններն ու առաքինութիւնները զանազան ոլորտներում²⁶: Նոյնիսկ պատմելով արքայի՝ Մլեհ իշխանի որդի Գեւորգին բանտարկելու եւ կուրացնելու որոշման մասին՝ հեղինակը, նշում է, որ «զայս այսպէս արարեալ ի քսու ոմանց»²⁷: Փորձելով մեղմել արքայի անողոք արարքի բացասական տպաւորութիւնը՝ հեղինակն այն ներկայացնում է որպէս կողմնակի ազդեցութեան արդիւնք, բայց ոչ որպէս արքայի սեփական նախաձեռնութիւն: Հեղինակի տրամադրուածութիւնն ակնհայտ է. ի դէմս «Տարեգրքի» շարադրողի աւելի

23 Նոյն տեղում, էջ 192:
24 Նոյն տեղում, էջ 194:
25 Նոյն տեղում:
26 Նոյն տեղում:
27 Նոյն տեղում, էջ 217:

22 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 194:

շուտ տեսնում ենք պաշտօնական դիրքորոշումը պաշտպանող պատմիչի: Այս, ինչպես նաև հեղինակի մէջըբերումն այն մասին, որ Լեւոն Մեծագործը «արիագոյն քաջութեամբ սպառազինեալ կայր ի մէջ թշնամեաց իբրեւ զախոյեան անպարտելի»²⁸, որը նոյնիսկ մահից առաջ խրատում է իր իշխաններին «անքակտելի մնալ ի սէր միմեանց եւ արիագոյն ի պահ աշխարհին»²⁹ ընդգծում է հեղինակի քաղաքական դիրքորոշման նպատակաուղղութիւնը: Հեղինակի դիրքորոշման մասին են վկայում նաև մի շարք այլ հաղորդումներ, ինչպէս օրինակ՝ նրա կասկածելի չէզոքութիւնը Գրիգոր Դ Տղայ (1173-1193) կաթողիկոսի քրոջ որդիների մահուան մէջ Լեւոն Մեծագործի մեղաւորութեան հարցում: Տպաւորիչ են նաև Սմբատ Սպարապետի դրական գնահատականներն ու անկեղծ ոգեւորութիւնը արքայի ունեցած յաջողութիւնները նկարագրելիս:

Նշենք, որ «Տարեգրքի» դրական հերոսների շարքում են նաև «քաջասիրտ» եւ «մեծախորհուրդ» Թորոս Բ իշխանը, «նոր նահապետ» Կոստանդին Պայլը: Հեղինակն առանձնապատուկ հոգածութեամբ է ներկայացնում Կիլիկիայի հայկական իշխանութիւնը վերականգնած Թորոս Բ իշխանի անձն ու ձեռքբերումները: Սմբատ Սպարապետն ընդգծում է իշխանի հմտութիւնը աստուածային դպրութեան հարցերում, յաջողակ լինելը՝ պատերազմական գործում եւ այլն: Հեղինակը, ինչպէս Լեւոն արքայի դէպքում, այստեղ եւս շեշտում է իր հերոսի ներողամիտ լինելը. երբ «չարաբարու» ու «անագորոյն» Մլեհը մտադրում է սպանել Թորոս իշխանին, վերջինս միայն պախարակում եւ ամօթանք է տալիս եղբօրը, ապա ձի, ջորի, զէնք ու գանձ տալով՝ արտաքսում է եւ «այլ ոչինչ արար փոխարէն չա-

րեաց նորա»³⁰: Թորոս իշխանի նկատմամբ հեղինակի յատուկ վերաբերմունքը նկատելի է նաև մէկ այլ դրուագում: Պատմելով Թորոս իշխանի եւ Անտիոքի դուքս Ռէյնալդ դը Շատիլեօնի կողմից Կիպրոսի վրայ կատարած յարձակման մասին՝ Սմբատ Սպարապետը, նշում է, որ Թորոսն այդպէս վարուեց Բիւզանդիայի՝ իրեն եւ հայ իշխաններին հասցրած չարիքների պատճառով³¹: Ինչ վերաբերում է Կոստանդին Պայլին, ապա նրա բնութագրումները փոքր-ինչ զիջում են նախորդ երկուսին իրենց ծաւալով, սակայն՝ ոչ պատկերաւորութեամբ: Կոստանդին Պայլին նա անուանում է «գնահատուելի Կիլիկոյ», ում խրատով էր, որ անդրդուելի եւ հաստատուն էին մնում ամէնքը: Հեղինակի համոզմամբ, նրա կենդանութեամբ էր պայմանաւորուած թագաւորութեան «շինութիւնը»³² եւ այլն:

Իր հերոսներին տրուած բնութագրումներից արդէն իսկ ակնյայտ է դառնում հեղինակի հակուածութիւնն ու դիրքորոշումը: Այն առաւել յստակ է դառնում, եթէ նկատի ունենանք նաև հետեւեալը. մի կողմից՝ նրա ակտիւութիւնն ու խօսքառատութիւնը իր սիրելի հերոսներին բնութագրելիս, իսկ միւս կողմից՝ չէզոքութիւնն ու զսպուածութիւնը այլ դէմքերի նկարագրման հարցում: Նկատենք՝ այն մօտեցումը, որը բնութագրական է «Տարեգրքի»՝ Մատթէոս Ուռհայեցոյց քաղաքում հատուածի համար, այստեղ փոխուում է: «Տարեգրքի» վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ եթէ այլ կերպարների բնութագրման հարցում հեղինակը չի ձգտում իդէալականացման եւ իրադարձութիւնները ներկայացնում է իրատեսօրէն, ապա նախընտրելի հերոսների ներկայացման դէպքում նրա մօտեցումը միանգամայն

30 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 187:
 31 Նոյն տեղում, էջ 176:
 32 Նոյն տեղում, էջ 237-238:

28 Նոյն տեղում, էջ 211:
 29 Նոյն տեղում, էջ 222:

այլ է: Սակայն ինչո՞վ է պայմանաւորուած այդպիսի կերպարանափոխութիւնը:

Այս հարցում, թերեւս, վճռական պէտք է համարել Թորոս Բ-ի, Լեւոն Ա-ի, ինչպէս նաև Կոստանդին Պայլի՝ Կիլիկեան Հայաստանի ճակատագրում խաղացած դերի կարեւորումն ու գնահատումը: Հեղինակի դիրքորոշումն, անշուշտ, պայմանաւորուած է եղել նրա քաղաքական եւ գաղափարական պատկերացումներով ու հայեացքներով: Միւս կողմից, «չէզոք» բնութագրումներ տալով այլ կերպարներին եւ նրանց շուրջ ծաւալուող իրադարձութիւններին, հեղինակն, ըստ էութեան, ձգտում է անկողմնակալ դիրք զբաղեցնել, ինչի արդիւնքներից է նրա զսպուածութիւնը: Սակայն հեղինակային ինքնագիտակցութեան բացայայտման տեսանկիւնից հարկ է առաւել ուշադրութիւն դարձնել այն կարեւոր իրողութեանը, որ, անկախ հեղինակին ուղղորդող դրդապատճառներից, այդպիսով աւելի նկատելի է դառնում նրա անձն ու ներկայութիւնը ստեղծագործութիւնում:

Ինչ վերաբերում է հեղինակային ակտիւ վերաբերմունքի դրսեւորումներին, ապա պատմիչը «Տարեգրքում» իր անունից հանդէս է գալիս միայն Շնթ եւ ՈՍէ թուականների ներքոյ: Պատմելով սովի պատճառով Ուռհայ քաղաքի բնակչութեան կրած մեծ նեղութիւնների մասին՝ հեղինակը գրում է. «...էս որպէս իմ թոռի, այս վրէժխնդրութիւն եղեւ յԱստուծոյ, վասն անիրաւ մահուանն Թէոդորոսի Կուրապաղատին, տեառնն Ուռհայոյ, զոր սպանին»³³: Հեղինակը, ով խնամքով թաքցնում է իր «եսը», այստեղ միտումնաւոր մոռանում է այդօրինակ մօտեցման մասին եւ ներկայանում է իր անունից, ինչը, թերեւս, կատարուածի նկատմամբ նրա անմիջական վերաբերմունքի եւ «օրիել-

33 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 113 (ընդգծումը մերն է - Ս. Ա.):

տիւ» գնահատականի դրսեւորում է: Միւս դէպքում՝ անդրադառնալով Լեւոն Մեծագործի թագաւոր հռչակուելուն՝ Սմբատ Սպարապետը նշում է. «...եւ ամենայն դասուք եկեղեցականօք եւ պատուաւոր իշխանօք զարդարեալ եւ վայելչացեալ էր երկիրս Կիլիկիոյ, զոր եւ պատմեցից զանուանս մի ըստ միոջէ...»³⁴: Հեղինակի ներկայութիւնը երկում զգացում է նաև «զոր վերոյ գրեցաք»³⁵, «որպէս ասացաք»³⁶, «որպէս վերագոյն գրեցաք»³⁷, «զոր յառաջն ասացաք»³⁸, «որպէս յառաջագոյն պատմեցաք»³⁹ եւ նմանտիպ այլ նշումների վիջոցով⁴⁰: Թէեւ Սմբատ Սպարապետն այս նշումներում հանդէս է գալիս առաջին դէմքի յոգնակի թուով, պէտք է ենթադրել, որ դրանց ներքոյ նկատի ունի իրեն, չնայած նախընտրում է չբարձրաձայնել իր մասին:

Ակնյայտ է, որ Սմբատ Սպարապետը ինքնադրսեւորման չի ձգտում: Այս իրողութիւնը բացատրելիս պէտք է նկատի ունենալ երկու կարեւոր հանգամանք: Նախ՝ հեղինակի նման վարքագիծը կարող է պայմանաւորուած լինել երկի ժանրային բնոյթով: Ապա՝ պէտք է չանտեսել նաև նրա անհատական մօտեցման խնդիրը: Հարցն այն է, որ հեղինակը, գնահատականներ տալով իրադարձութիւններին ու կերպարներին, լուր է իր նպատակի եւ խնդիրների մասին: Արդիւնքում՝ երկը ընթացելիս չենք տեսնում Սմբատ Սպարապետի ինքնագնահատականը, ինչն էլ հէնց ստեղծում է ողջ թուացեալ հեղինակային անանունութիւնն աշխատութիւնում:

34 Նոյն տեղում, էջ 208 (ընդգծումը մերն է - Ս. Ա.):
 35 Նոյն տեղում, էջ 46:
 36 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 108:
 37 Նոյն տեղում, էջ 115:
 38 Նոյն տեղում, էջ 187:
 39 Նոյն տեղում, էջ 190:
 40 Նոյն տեղում, էջ 112, 175, 213, 223:

Այսպիսով՝ Սմբատ Սպարապետը, ով ունի երկի կառուցուածքի եւ ոճի յստակ գիտակցում, ինչպէս նաեւ՝ իրեն եւ սեփական աշխատութիւնը նախորդներինց առանձնացնելու տրամադրուածութիւն, նախընտրում է հեղինակային անանունութիւնը՝ չբացայայտելով սեփական «ես»-ը: Սակայն այն աներկբայ փաստը, որ նրա լուրջութիւնն ուղեկցւում է երկում կամայ թէ ակամայ արտայայտուած հեղինակային ինքնագիտակցութեան եւ անհատականութեան տարրերի առկայութեամբ, ինչպէս նաեւ տեքստի կառուցուածքային ու ոճային ներդաշնակութեամբ եւ համամասնութիւնների պահպանմամբ, թոյլ է տալիս Սմբատ Սպարապետի մօտեցումը դիտարկել որպէս նրա հեղինակային ոճի առանձնայատկութիւն:

Ամփոփելով նշենք, որ Սմբատ Սպարապետը «Տարեգրքում» ներկայանում է ոչ թէ որպէս անդէմ ստեղծագործող, ով թաքցնում է իր հայեացքներն ու համոզմունքները, այլ՝ ինքնատիպ հեղինակային գիտակցութեամբ օժտուած պատմիչ, ում դիրքորոշումները նկատելի են ինչպէս նիւթերի ու տուեալների ընտրութեան, այնպէս էլ պատմական դէմքերի եւ իրադարձութիւնների գնահատման հարցերում: «Տարեգրքի» կառուցուածքը, ոճն ու բովանդակութիւնը՝ մի կողմից, եւ ստեղծագործութիւնում առկայ հեղինակային թէեւ փոքրաթիւ, բայց անձնաւորուած նշումները միւս կողմից, թոյլ են տալիս եզրակացնել, որ Սմբատ Սպարապետն իրեն լիովին ընդունում է որպէս աշխատութեան լիարժէք հեղինակ:

THE LOCATION OF DRAZARK, BURIAL PLACE OF THE KINGS AND QUEENS OF ARMENIA AND OF THE "BLESSED RUBENIANS"

Samvel Grigoryan

Hommage au Professeur Gérard Dédéyan

The exact location of the Royal monastery of Drazark which was called also "Senior monastery" (Awag vank' Աւագ վանք)¹ is still unknown². I try to discover it in the present study. This task is closely related to ascertaining the site of Kopitar, one of the most important strongholds and districts in Cilician Armenia.

Of all Cilician Armenian monasteries, cloisters and hermitages, Drazark (Դրազարկ, Թրազարկ) was perhaps the most important, the most famous and the most associated with the history of the Rubenian princely later royal

house, from its dawn to extinction. According to Armenian medieval sources, Drazark was founded or renewed by great iřxan (great prince) T'oros I Rubenián (about 1100 - 29) in the first half of his reign³. The earliest mention of Drazark dates back to 1113⁴.

Since the time of its foundation, Drazark served not only the cloister and cultural center but also the burial place of high clergy and high nobility⁵. Vardapet Geōrg Melrik (†1114) and vardapet Kiwrakos (†1127), first known priors of the monastery and establishers of its cloistral rule, were buried

* I dedicate this essay to the memory of Jerry H. Bentley (1949-2012), great scholar, wonderful human being, friend as well as unwitting mentor, who passed away alas too young.

I would like to thank Houri Berberian for reading more drafts of this article than she or I would care for and Loretta Nasser for the many conversations on Joseph Emin's work. Vartan Matiossian and Jirair Libaridian helped in clarifying the meaning of a few passages in my translations below, and James Russell, Talar Shahinian, Mana Kia, Michael Fisher, William Gervase Clarence-Smith, Raymond Kévorkian, and Marc Mamigonian provided valuable feedback. Needless to say, I alone bear responsibility for any remaining errors.

¹ A. Matevosyan (ed.), *Hayeren jeřagreri hiřatakarranner E - ŽB dd*, [The colophons of 5th-12th centuries Armenian manuscripts], Yerevan 1988, p. 209; N. Polarean (ed.), *Mayr c'uc'ak jeřagrac' Srboc' Yakobeanc'*, [The grande catalogue of St. James manuscripts], vol. VI, Jerusalem 1972, p. 193.

² C. Mutafian, *L'Arménie du Levant (XI^e-XIV^e siècle)*, vol. 1, Paris, 2012, p. 617.

³ M. Mēlik'-Adamean and N. Tēr Mik'aēlean (ed.), *Matt'ēos Urhaec'i Žamanakagrut'iwn*, [The Chronography of Matt'ēos Urhaec'i], Vataršapat 1898, p. 334; S. Aglean (ed.), *Smbatay Sparapeti Taregirk'* [The Chronicle of Smbat Sparapet], Venice San Lazzaro degli Armeni 1956, pp. 143-4; K. Matevosyan (ed.), *Samuēl Anec'i ew řarunakolner. Žamanakagrut'iwn Adamic' minč'ew* 1776, [Samuel Anetsi and Continuator. The Chronicle from Adam to 1776], Yerevan 2014, pp. 201, 216; Het'um Patmič', *Patmut'iwn azgin Rovbinanc i'ē vorpēs tirec'in Kilikio* [The History of the Rubēnian House: How they became the lords of Cilicia], in V. Yakobyān (ed.), *Manr žamanakagrut'yunner 13-18 dd*. [The Short Chronicles of 13th-18th centuries], vol. 2, Yerevan 1956, p. 100; Vahram d'Édesse, *La chronique rimée des rois de la Petite Arménie*, in Éd. Dulaurier (ed.), *Recueil des historiens des croisades Documents arméniens*, vol. 1, Paris 1869, p. 499.

⁴ *Hayeren jeřagreri hiřatakarranner E - ŽB dd*, p. 142.

⁵ C. Mutafian, *L'Arménie du Levant*, vol. 1, pp. 617-620.